

## Կարծիք

### Հովսեփյան Նելլի Դավիթի

«Պետության եվ իրավունքի հիմնախնդիրները XIX դարի հայ մտածողների  
իրավաքաղաքական ուսմունքներում» թեմայով

**ԺԲ.00.01 - «Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և  
իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական  
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության  
վերաբերյալ**

Նելլի Հովսեփյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է XIX դարի  
հայ մտածողների ուսմունքը պետության և իրավունքի վերաբերյալ  
հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությանը:

Անցյալի իրավաքաղաքական արժեքների հետազոտությունը միշտ էլ  
արդիական է ներկայանում, եթե նրանցում արտացոլված են ազգային շահերը և  
հետաքրքրությունները, որոնք ունեն անանց նշանակություն: Առանց  
չափազանցնելու կարելի է պնդել, որ XIX դարի հայ մտածողների ուսմունքը  
հասարակական կարգի, պետության կառավարման համակարգի և իրավունքի  
վերաբերյալ այսօր էլ արդական ու հրատապ են:

Աշխատանքում առաջին անգամ համակարգված և համալիր  
ուսումնասիրության առարկա է դարձել XIX դարի հայ առաջավոր մտածողների  
գաղափարները, հայացքները, հայեցակարգերը հայոց պետականության, նրա  
կառուցվածքի, կառավարման ձևի, ընտրական համակարգի և իրավունքի  
վերաբերյալ: Աշխատանքում պատշաճ գիտական խորությամբ վերլուծվում և  
իմաստավորվում է XIX դարի հայ մտածողների թողած ժառանգությունը և դրա  
նշանակությունը արդիական խնդիրների լուծման գործում:

Գրախոսվող հետազոտության գիտական նորույթը կայանում է  
հետևյալում. հայագիտության մեջ հրատարակվել են բազմաթիվ նյութեր,  
ուսումնասիրություններ, որոնք նվիրվել են XIX դարի հայ մտածողների  
իրավաքաղաքական հայացքներին, դրանց առանձնահատկություններին, սակայն  
քննարկվող ժամանակաշրջանի պետաիրավական միտքը համալիր և ամբողջական  
ուսումնասիրությամբ մինչև այժմ չի ներկայացված: Ընդ որում բացի XIX դարի հայ  
մտածողների աշխատություններից, վեր են հանվել և վերլուծվել նաև հայաբնակ

վայրերում լույս ընծայված հայ ամսագրերում և թերթերում հրատարակված պետաիրավական բովանդակությամբ հոդվածները:

Քննարկվող ատենախոսությամբ առաջին անգամ փորձ է արվում պատմականության սկզբունքի և իրավահամեմատական մեթոդի կիրառմամբ համալիր և համակողմանի ուսումնասիրության ենթարկել XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական հայացքները պետական և իրավական խնդրահարույց հարցերի վերաբերյալ: Ատենախոսության հետազոտական շրջանակի մեջ ներառված են ինչպես XIX դարի հանրահայտ, այնպես էլ ոչ այնքան հայտնի բոլոր այն մտածողները, որոնք այս կամ այլ կերպ անդրադարձել են պետության և իրավունքի առաջացման, դրանց էության, բնական և դրական իրավունքի, պետության կառավարման ձևերի և այլ հարակից հարցերին:

Գրախոսվող հետազոտությունը ամփոփում և ամբողջականացնում է XIX դարի հայ իրավաքաղաքական միտքը, դրանում արտացոլված հայեցակարգային մոտեցումները ունեն ոչ միայն տեսական-ճանաչողական նշանակություն, այլև գործնական հնչեղություն՝ արդի մարտահրավերներին համարժեք լուծումներ գտնելու իմաստով:

XIX դարի հայ առաջդեմ մտածողներին հաջողվել է ստեղծել պետաիրավական հիմնախնդիրների վերաբերյալ համակարգված տեսական ուսմունք, որոնք գաղափարական հիմք հանդիսացան հետագայում հայ ազգային-ազատագրական պայքարի համար:

Ընդհանուր առմամբ, դրական գնահատելով կատարված աշխատանքը, այնուամենայնիվ, ունենք որոշակի նկատառումներ աշխատանքի վերաբերյալ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, հեղինակը բազմիցս ընդգծելով XIX դարի հայ իրավաքաղաքական մտքի ազդեցությունը հետագա ժամանակների իրավաքաղաքական գաղափարների ձևավորման ու զարգացման վրա, սակայն չի բացահայտել այդ ազդեցության կոնկրետ եղանակներն ու ձևերը, ազդեցության մակարդակը և վերջնարդյունքը:

Երկրորդ, հեղինակը տարբերակելով իրավաքաղաքական հոսանքները (կղերական, աղայական, հեղափոխական, սոցիալ-դեմոկրատական) չի առանձնացրել ազատական-իրավաբանական գաղափարախոսությանը՝ հանձինս ներկայացուցիչների ուսմունքներին (Գրիգոր Զոհրապ, Գրիգոր Արծրունի) որոնց

գաղափարական ազդեցությունը առավել նշանակալի է հետագա մտածողների հայացքների ձևավորման վրա:


Նշված նկատառումները կրում են մասնակի բնույթ և բնավ չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հեղինակը պատշաճ գիտական մակարդակով է լուծել իր առջև դրված առաջադրանքը, իսկ ստացված հետազոտական արդյունքների հիման վրա ձևակերպել է հետևություններ, եզրակացություններ և առաջարկություններ, որոնք ունեն զգալի տեսական և գործնական նշանակություն՝ այսօրվա հայ հասարակական կյանքի և սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում:

Ատենախոսության աշխատանքը կատարվել է ԲՈԿ-ի կանոններին համապատասխան:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են հեղինակի հրատարակած մի շարք գիտական հրապարակումներում: Ատենախոսության թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը:

**Ելնելով վերոշարադրյալից, կարելի է եզրակացնել, որ Նելլի Դավիթի Հովսեփյանի «Պետության և իրավունքի XIX դարի հայ մտածողների իրավաքաղաքական ուսմունքներում» թեմայով ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պաշտոնական, ամբողջական ավարտուն հետազոտություն է, իսկ հեղինակն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:**

Պաշտոնական ընդդիմախոս՝ Իրավաբանական գիտությունների թեկնածու,  
Դոկտորանտ՝ Լիանա Մալխասի Մալխասյան   
Լիանա Մալխասի Մալխասյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Երևանի «Հայբուսակ»  
համալսարանի գիտական քարտուղար՝ Տիգրան Պետրոսյանս 